

ԱՌԱՇՆԵՐԻ ՈՒ ԱՍՏՅՎԱԾՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈՒ ԼԵԶՎԱՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ – ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՐՊԵՐԸ

ՆԱՐԵ ՇԱԼՈՒՆՑ^{ib}

Երևանի պետական համալսարան

Հոդվածում ներկայացվում են լեզվամշակույթի վերաբերյալ ակադեմիական մոտեցումները, որոնք ընդգրկում են մտածողության, ճանաչողության ու խոսույթի փոխառնչությունների շրջանակը: Մասնավորապես՝ առաջներն ու ասացվածքները լեզվամշակույթի յուրօրինակ դրսևորումներ են, որոնց հիմքում հասարակական ճանաչողությունն է: Առաջներն ու ասացվածքները բովանդակում են լեզվամշակույթի յուրօրինակությունները՝ հանդես գալով իբրև լեզվամշակութային հիշողության պահպանման միջոց: Առաջների գործաբանական առանձնահատկությունների վերհանման դիտանկյունից կարևորվում է ճանաչողական գործընթացների նշանակությունը: Այս համատեքստում հարկ է ընդգծել առաջների հաղորդակցական գործառույթի էական դերը խոսույթային դաշտում, ինչպես նաև ընդհանուրի և անհատականի դրսևորումները: Նկատի առնելով վերոնշյալը՝ ժամանակակից լեզվաբանական հետազոտությունների համատեքստում արդիական է առաջների ու ասացվածքների ուսումնասիրությունը լեզվամշակութային ու լեզվաճանաչողական-գործաբանական հայեցակերպերի հատման տիրույթում: Առաջներն ու ասացվածքները դիտարկվում են լեզու, մշակույթ, ճանաչողություն, խոսույթ կարգերի փոխկապակցվածության համատեքստում:

Բանալի բառեր – *առած, ասացվածք, առածային խոսույթ, լեզվամշակույթ, ճանաչողական գործընթաց, լեզվագործաբանություն*

Ներածություն

Գիտական շրջանակում հետազոտությունների նոր հայեցակերպերի ներդրումը հնարավորություն է տալիս միջգիտակարգային վերլուծություններ կատարելու՝ խնդիրը քննելով ինչպես տարբեր դիտանկյուններից, այնպես էլ

Նարե Շալունց – ԵՊՀ ֆրանսիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ

Наре Шалунц – аспирант кафедры французской филологии ЕГУ

Nare Shalunts – PhD Student at YSU Chair of French Philology

Էլ. փոստ՝ nare.shalunts@ysu.am <https://orcid.org/0000-0003-3606-261X>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 21.03.2025

Գրախոսվել է՝ 10.04.2025

Հաստատվել է՝ 02.06.2025

© The Author(s) 2025

վերջիններիս համադրման միջոցով: Տարբեր գիտակարգերին վերաբերող տեսական դրույթների մեկտեղման արդյունքում մշակվում են նոր տեսություններ, որոնց հիման վրա ընդլայնվում է կիրառական հետազոտությունների շրջանակը: Հաշվի առնելով գիտական ուսումնասիրությունների միջգիտակարգային բնույթը՝ լեզվական նյութի վերլուծությունն իրականացվում է այլ գիտակարգերի հետ փոխկապակցման համատեքստում: Մասնավորապես՝ միջգիտակարգայնության լույսի ներքո լեզվական երևույթների ուսումնասիրությունը հարակից գիտաճյուղերի դաշտում պայմանավորում է հետազոտությունների արդիականությունն ու առաջադրում գիտական նորույթ: Այսպիսով, հանրալեզվաբանությունը, լեզվագործաբանությունը, ճանաչողական լեզվաբանությունը, լեզվամշակութաբանությունը, իրավալեզվաբանությունը, մեդիալեզվաբանությունը, հոգելեզվաբանությունն իրապես բովանդակում են միջգիտակարգային հետազոտությունների լայն շրջանակ: Սույն հոդվածում փորձ է արվում ներկայացնել առաձաքանության՝ իբրև լեզվաբանական գիտակարգի ուսումնասիրման մշակութային, ճանաչողական և գործաբանական դիտանկյունը: Ընդ որում՝ ընդգծվում է վերոնշյալ հայեցակերպերի հատման տիրույթը, ինչն էլ ապահովում է հիմնախնդրի վերաբերյալ համալիր մոտեցման առաջադրումը:

Լեզվամշակույթի գիտական բնորոշման շուրջ

Առաձներն ու ասացվածքները՝ որպես առաձաքանության ուսումնասիրման օբյեկտ, նախ և առաջ լեզվամշակույթի յուրօրինակ արտահայտություն են: Ուստի վերոնշյալ լեզվական միավորները դիտարկվում են լեզվամշակութաբանության շրջանակում, որի առանցքը լեզվի և մշակույթի փոխհարաբերության խնդիրն է, «լեզու» և «մշակույթ» հասկացությունների համակցումը որպես «լեզվամշակույթ»: Նախքան լեզվամշակույթի գիտական բնորոշմանն անցնելը հարկ ենք համարում ամփոփ ներկայացնել մշակույթի բնութագրիչ գծերն ու առանձնահատկությունները, ինչը թույլ կտա առավել համակողմանի և ընդգրկուն տեսական ակնարկի միջոցով վեր հանել լեզվամշակութային հետազոտությունների հիմնական միտումներն ու դիտանկյունները առաձների ու ասացվածքների ուսումնասիրման համատեքստում:

Իբրև իմաստային կաղապար՝ մշակույթի ուսումնասիրման հիմքը նշանային համակարգն է. այն ներառում է մտածելու և զգալու ձև, խոսք, գործողություն¹:

Հիմք ընդունելով վերոնշյալ բանաձևումը՝ մշակույթը կարելի է դիտարկել մտածողություն–խոսք–գործողություն եռամակարդակ կաղապարի շրջանա-

¹ Տե՛ս **Sinha, C.** Ten Lectures on Language, Culture and Mind. Cultural, developmental and evolutionary perspectives in cognitive linguistics. (Distinguished Lectures in Cognitive Linguistics, Vol. 6). Brill, 2017, էջ 9:

կում: Այս դիտանկյունը ենթադրում է մշակութային իմաստի ստեղծման և կիրարկման գործընթացների համադրում: Ընդ որում՝ մշակույթի և առաջադրվող կադապարի առանձին բաղադրիչների, ինչպես նաև դրանց համագումարի երկկողմանի փոխազդեցությունն ակնհայտ է: Հարկ ենք համարում նշել, որ տվյալ դեպքում կարևորվում է մշակույթի հարաշարժ բնույթը, քանի որ եռաչափ կադապարը, ընդգրկելով մարդկային գործունեության ու հաղորդակցության համատեքստը, անընդհատ ենթարկվում է փոփոխությունների: Առաջնային մակարդակը մտածողությունն է, որի հիմքը ճանաչողական կադապարներն են: Հիրավի, մտածողությունը ձևավորում է մշակույթ, իսկ մշակույթը՝ մտածողություն: Մշակութային ամբողջությունը կարող է դիտարկվել իբրև ճանաչողական դիտանկյունից մտածողության հասկացման և ընկալման միջոց ու հայելի: Մտածողությունն առկայանում է խոսքի միջոցով, որը կադապարի երկրորդ մակարդակն է: Այս դիտանկյունն ուսումնասիրում է լեզվի մշակութային և մշակույթի լեզվական հայեցակերպերը: Տվյալ դեպքում առաջնեն ու ասացվածքները մտածողության ու լեզվի մշակութային կողմի դրսևորման ձևեր են: Լեզուն և մասնավորապես դրա կիրառումը՝ խոսքը, մշակութային իմաստի ստեղծման կարևորագույն միջոցներ են: Լեզվական հաղորդակցումը, ինչպես նաև ոչ խոսքային հաղորդակցման տարրերը մշակութային առանձնահատկությունների դրսևորման ձևեր են, որոնք թույլ են տալիս բնորոշել հաղորդակցության կողմերի մշակութային ինքնությունը: Միևնույն ժամանակ հարկ է ընդգծել նաև մշակույթի ազդեցությունը հանրույթի լեզվական կողմի վրա. մշակութային կադապարները ազդեցություն են թողնում լեզվական կառույցների վրա և ձևավորում համապատասխան խոսույթային շերտեր: Այս պարագայում վերոնշյալի վառ վկայությունը առաձներում ու ասացվածքներում մշակութային տարրերի առկայությունն է: Կադապարի երրորդ շերտը՝ գործողությունը, խոսքի գործաբանական դիտարկումն է: Այն ներառում է մշակութային լայն համատեքստում մարդկային գործունեության ոլորտները, միջանձնային փոխհարաբերությունների շրջանակը, որոնք էական նշանակություն ունեն մշակութային առանձնահատկությունների վերհանման ու վերլուծության համար: Այս դիտանկյունից կարևոր է առաձների ու ասացվածքների հաղորդակցական գործառույթների նշանակությունը:

Անհատականի ու ընդհանուրի հակադրության և միաժամանակ զուգահեռման շրջանակում մի շարք մոտեցումներ բացահայտում են մշակույթի ուսումնասիրման հիմնական միտումները: Ընդհանուրի տեսության դիտանկյունից՝ այն հասարակության մեջ ընդունված արժեքների, կանոնների ամբողջությունն է, որն ունի հավաքական ուղղվածություն: Անհատական կտրվածքով մշակույթի ուսումնասիրությունը ենթադրում է, որ հավաքական արժեհամակարգը մեծ ազդեցություն է ունենում անհատական գծերի վրա: Այնուամենայնիվ, հարկ է ընդգծել անհատական առանձնահատկությունների

կարևորությունը: Վերոնշյալ երկու մոտեցումները ձևավորում են փոխառնչությունների բարդ շղթա: Ժամանակային գործոնի դերով պայմանավորված՝ մշակույթի բանաձևումը կարելի է ներկայացնել ժամանակային եռաչափ կտրվածքով՝ անցյալ-ներկա-ապառնի: Մասնավորապես՝ Յու. Լոտմանն ու Բ. Ուսպենսկին մշակույթը սահմանում են որպես «հավաքական հիշողություն»²: Հատկանշական է, որ մշակույթի բնորոշման գործում կարևոր դեր ունի համաժամանակյա և տարաժամանակյա հայեցակերպերի զուգահեռումը: Նախ՝ տարաժամանակյա մակարդակում այն հանդես է գալիս իբրև «հավաքական ժառանգություն»³, անցյալի պատմական դիտում: Համաժամանակյա մոտեցումը ենթադրում է, որ մշակութային արժեքները ներկայի համատեքստում անընդհատ ենթարկվում են փոփոխությունների՝ կրելով ժամանակի դրոշմը և ապառնի որոշակի ժամանակում վերափոխվելով հաստատուն համակարգի: Ուստի առաձների ու ասացվածքների մշակութային համատեքստի դիտարկումը պայմանավորված է նաև ժամանակային գործոնի հաշվառմամբ:

Մշակույթը, հիրավի, ընդգրկում է մարդկային գործունեության լայն շրջանակը: Այս համատեքստում համալիր մոտեցումը ենթադրում է, որ այն բովանդակում է հանրության ընդհանրություններն ու յուրահատկությունները. այն ընդհանուրի դրսևորման ձևն է, որը միևնույն ժամանակ ինքնության արտահայտման կարևոր ցուցիչ է: Մշակույթը հանրության շրջանակում ձևավորում է փոխհարաբերությունների բազմաշերտ համակարգ՝ այդպիսով անհատական մակարդակը փոխակերպելով ընդհանուրի:

Մշակութային ինքնության կարևորագույն ցուցիչներից մեկը լեզուն է: Հարկ է նշել, որ մշակութային իրողությունների լեզվական առկայացումը (տվյալ դեպքում առաձների ու ասացվածքների միջոցով) մշակութային հիշողության պահպանման միջոց է: Մարդու կյանքում լեզվի դերի թերևս լավագույն սահմանումը պատկանում է Հումբոլդտին. «Մարդը մտածում, զգում և ապրում է միայն լեզվում»⁴:

Մշակութային դրսևորումների ու առանձնահատկությունների վերհանման կարևորագույն միջոցը լեզուն է: Լեզվականի ու մշակութայինի համադրումը՝ որպես հարաշարժ երևույթ, գիտական տարբեր հայեցակարգերի հիմնարար սկզբունքն է, ինչն առկայանում է մտածողության, ճանաչողության և ինքնության հիմնահարցերի հետ լեզվամշակույթի փոխառնչությունների համատեքստում: Ավելին, հարկ է ընդգծել համընդհանուր-ընդհանուր-անհատական կա-

² Տե՛ս **Lotman, I., Ouspenski, B.** *Sémiotique de la culture russe*. Traduit du Russe et Annoté par Françoise Lhoest. Lausanne: L'Âge d'Homme, 1990, էջ 21:

³ Տե՛ս **Loubier, C.** *Langues au pouvoir. Politique et symbolique*. Préface de William Francis Mackey. Paris: L'Harmattan, 2008, էջ 42-43:

⁴ **Humboldt, W.** *Sur le caractère national des langues et autres écrits sur le langage*. Trad. fr. éd. Bilingue. Paris : Seuil, 2000 [1828]. p. 157.

ղապարի կարևորությունը լեզվամշակութային բնութագրումների շրջանակում: Առաձների ու ասացվածքների ազգամշակութային բաղադրիչը լեզվական մակարդակում առկայանում է մի շարք գործոնների օգնությամբ՝ հնչյունային-հնչերանգային, գրաբանական-ուղղագրական, ձևաբանական, շարահյուսական, բառային, տեքստային, ոճական, հանրալեզվական⁵:

Գործաբանական հետազոտությունների շրջանակում խոսույթի մշակութային գործառնությունը բավականին ընդգրկուն է, քանի որ պայմանավորում է բաղադրիչների բովանդակությունն ու փոխկապակցվածությունը⁶: Հենց այս կետում են հատվում լեզուն, խոսքն ու մշակույթը: Առաձներն ու ասացվածքները՝ որպես լեզվական կառույցներ, կիրառվում են խոսքում՝ իբրև մշակութային իրականության խորհրդանիշ՝ արտահայտելով մշակութային իրականություն: Լեզու-մշակույթ կապի վերաբերյալ ֆրանսիացի հետազոտողներ Կ. Կրամշը և Ռ. Գալիսոնը առաջադրել են համանման տեսություններ, որոնց հիմքում երկու երևույթների հասարակական ուղղվածությունն է: Տեսությունների հիմնական դրույթները հետևյալն են.

1. *լեզուն արտահայտում է մշակութային իրականություն,*
2. *լեզուն մարմնավորում է մշակութային իրականություն,*
3. *լեզուն մշակութային իրականության խորհրդանիշ է⁷:*

1. *լեզուն հաղորդում է մշակութային իրականություն,*
2. *լեզուն ստեղծում է մշակութային իրականություն,*
3. *լեզուն մշակութային իրողությունների արդյունք է⁸:*

Մեր կարծիքով՝ վերոնշյալ փոխառնչությունը կարելի է բանաձևել հետևյալ կերպ. *լեզուն մշակույթի գունապնակի տարրերից է, որում արտացոլված են մյուս գույների երանգները*: Լեզվի ու մշակույթի կապի վերաբերյալ ուսումնասիրությունները հիմք դարձան 19-րդ դարում գիտական հարացույցում լեզվական իրողությունների՝ որպես մշակութային երևույթների քննության ու վերլուծության նոր գիտակարգի՝ *լեզվամշակութաբանության* ի հայտ գալուն: Լեզվամշակութաբանության նպատակը էթնոլեզվաբանության և հարակից գիտակարգերի հետազոտությունների արդյունքում ձեռք բերված տեղեկության մեկտեղումն է, ինչպես նաև «մարդու ֆենոմենը պայմանավորող երկու հիմնարար երևույթների՝ լեզվի և մշակույթի փոխազդեցության մեխանիզմների

⁵ Տե՛ս **Բաղդասարյան, Հ.** Համընդհանուրի, ազգայինի և անհատականի հակադրամիասնությունը որպես թարգմանական խնդիր, Եր., ԵՊՀ հրատ., 2023, էջ 163:

⁶ Տե՛ս **Dijk, T.** Discourse and Context. A Sociocognitive Approach. Cambridge University Press, 2008, էջ 42:

⁷ Տե՛ս **Kramsch, C.** Language and Culture, Oxford University Press, 1998, էջ 3:

⁸ Տե՛ս **Galissou, R.** Cultures et lexicultures. Pour une approche dictionnaire de la culture partagée. Annexes des Cahiers de linguistique hispanique médiévale, vol. 7, Hommage à Bernard Pottier, 1988, էջ 330:

վերհանումը»⁹: Լեզվաբանությունը հանդես է գալիս իբրև «մշակութային (կամ պատմական) վերլուծության գործիք»¹⁰: Լեզվամշակույթը «լեզվում և լեզվի միջոցով դրսևորվող մշակույթն է», «լեզվաճանաչողական երևույթ»¹¹:

Հանրույթի լեզվական ինքնությունը մշակութային իրողությունների արտահայտման միջոց է, ինչը լեզու-մշակույթ-ինքնություն ամբողջության վերլուծության եղանակներից մեկն է: Այս ամենին զուգահեռ՝ լեզուն նաև ունակ է ստեղծելու այդ իրականությունը: Հաղորդակցության միջոցն ու եղանակը ևս իմաստաստեղծ դեր են կատարում այն առումով, որ ձևի միջոցով որոշակի բովանդակություն են հաղորդում: Լեզուն՝ որպես նշանային համակարգ, հանդես է գալիս իբրև մշակութային խորհրդանիշ: Այն արտացոլում է մշակութային նորմերն ու արժեքները: Դիտարկելով առաձևերի ու ասացվածքների՝ մշակութային իրականության արտացոլման դրույթը, կարելի է եզրակացնել, որ վերջինս ենթադրում է նշանակետման բազմաշերտ գործընթաց, որի փուլերն են առաձի ու ասացվածքի մշակութային ներիմաստի լեզվականացումը, հաղորդակցումը և վերծանումը: Հիրավի, լեզվական նշաններն արտացոլում են մշակութային իրականության տարրերը, ինչի արդյունքում լեզուն ինքը կրում է փոփոխություններ՝ կարծես «հարմարվելով» մշակույթին: Սա հանգեցնում է լեզվական համակարգի նորացման, որի վառ վկայությունը լեզվի պատմության տարբեր փուլերում առաձևերի ու ասացվածքների տարբերակների առկայությունն է, ինչն էլ թույլ է տալիս պատկերացում կազմել սոցիալական ու մշակութային իրողությունների ներհայեցումների վերաբերյալ: Երևույթը հակառակ տեսանկյունից դիտարկելիս հարկ է նշել, որ լեզվական հաղորդակցման միջոցով ստեղծվում են մշակութային կաղապարներ:

Լեզու-մտածողություն կապի վերաբերյալ Գ. Բրուսյանն առաջ է քաշել լեզվաբանական լրացուցչության սկզբունքը, որի համաձայն՝ իմացության գործառույթի շրջանակում լեզուն աշխարհի իրական պատկերը հարստացնում է հավելյալ տեղեկությամբ՝ ստեղծելով լեզվական պատկեր, «աշխարհի լրացուցիչ դիտում»¹²: Ըստ Բրուսյանի՝ մտածողությունն ու լեզուն կազմում են համակարգ՝ համապատասխանաբար ներառելով տրամաբանական ու լեզվական պատկերներ: Բառի տրամաբանական կողմը՝ անփոփոխակեր, ենթադրում է հասկացական շերտը, աշխարհի իրական պատկերը, մինչդեռ լեզվականը՝ որպես հարափոխ երևույթ, յուրովի է դրսևորվում յուրաքանչյուր լեզվում. *մտքերի միջոցով ձևավորվող տրամաբանական աշխարհին զուգահեռ*

⁹ Хроленко, А. Т. Основы лингвокультурологии: Учебное пособие. Под ред. В.Д. Бондалетова. 5-е изд. М.: Флинта: Наука, 2009, с. 31.

¹⁰ Duranti, A. Language as Culture in U.S. Anthropology: Three Paradigms // Current Anthropology. Volume 44. Number 3, 2003, p. 324.

¹¹ Красных, В. В. Лингвокультура как объект когнитивных исследований // Вестник Московского университета. Сер. 9. Филология. № 2, 2013, с. 10.

¹² Բրուսյան, Գ. Փիլիսոփայություն և լեզու, Եր., «Հայաստան» հրատ., 1972, էջ 124:

լեզուն ձևավորում է լեզվական պատկեր¹³: Մի կողմից տրամաբանական պատկերին հատուկ է համընդհանրությունը՝ հաշվի առնելով գիտակցության մեջ իրականության նույնական բնույթը, մյուս կողմից լեզվականը ներամփոփում է ազգային առանձնահատկություններ: Տրամաբանականն ու լեզվականը հիմնականում համընկնող կարգեր են: Այնուամենայնիվ, բառային պատկերը կարող է որոշակիորեն տարբերվել իրականից լրացուցիչ իմաստային պատկերացումների շնորհիվ:

Իրական աշխարհի ու լեզվի փոխհարաբերությունն իրականանում է մտածողության միջոցով: Մտածողությունն այն կամուրջն է, որ կապում է ֆիզիկական իրականությունը լեզվականին: Հիրավի, առաձներն ու ասացվածքները մտածողության ու աշխարհընկալման արտացոլման եղանակներ են: Մարդն արտահայտում է շրջապատող աշխարհի մասին դատողությունները՝ դրանց տալով լեզվական ձև: Սակայն հարկ է նշել, որ բառը ոչ թե ուղիղ կերպով արտացոլում է առարկան կամ երևույթը, այլ ի ցույց է դնում դրա մասին պատկերացումը¹⁴: Տարբեր ժողովուրդների մեջ տարբեր կերպ է իրականանում ֆիզիկական իրականությունից լեզվական արտահայտություն անցումը: Մտածողության բազմաշերտ լինելու այս հանգամանքն էլ պայմանավորված է մշակութային առանձնահատկությունների համագումարով: Այս համատեքստում առաձներն ու ասացվածքները մշակութային լեզվամտածողության ամփոփ պատկերներ են, իրականությունը փոխաբերաբար արտահայտվում է այլ պատկերի միջոցով: Ուստի իրական աշխարհի պատկերը մշակութային յուրահատկությունների լույսի ներքո սկիզբ է դնում լեզվական իրականության:

Առաձներն ու ասացվածքները մշակույթ-ճանաչողություն-խոսույթ համակարգում

Ֆրանսիացի լեզվաբան Պ. Շաղոդոն խոսույթը դիտարկում է որպես մշակութային ինքնության հիմնական ցուցիչ և լեզվի մշակութային կողմի դրսևորման արտահայտություն: Հեղինակի պնդմամբ՝ հասարակության մշակութային գծերն արտացոլված են ոչ թե լեզվական, այլ խոսույթային ինքնության դաշտում: Ուստի մշակույթն ամփոփված է ոչ թե բառերում, այլ դրանց գործածման եղանակներում¹⁵:

Իբրև խոսույթ դիտարկելիս առածը լեզվամշակութային ինքնության արտահայտություն է: Այս շրջանակում լեզվագործաբանության տեսությունը ենթադրում է հաղորդակցական տարբեր իրադրություններում խոսույթի ներակա իմաստների կարևորում: Նկատի առնելով այն հանգամանքը, որ խնդրո առար-

¹³ Տե՛ս նույն տեղը, էջ 3-5, 118:

¹⁴ Տե՛ս **Тер-Минасова, С. Г.** *Язык и межкультурная коммуникация*. М.: Слово, 2000:

¹⁵ Տե՛ս **Charaudeau, P.** *Langue, discours et identité culturelle*. Revue de didactologie des langues-cultures, 2001. 3-4, № 123, էջ 344-346:

կա լեզվական միավորները՝ առածներն ու ասացվածքները, ներակայման տեսանկյունից ներառում են վերլուծության լայն շրջանակ՝ դիտարկվելով իբրև խորհուրդ, քննադատություն, խրատ և այլ հաղորդակցական ակտեր ընդգրկող ասույթներ, կարևորվում է տվյալ միավորների քննությունը մշակութային, ճանաչողական ու գործաբանական առանձնահատկությունների հաշվառմամբ:

Արդի գիտական հարացույցում լեզվամշակութաբանական հետազոտությունների իրականացման կարևոր գործիք է համարվում խոսույթի վերլուծությունը¹⁶, տեքստի լեզվաբանությունը¹⁷: Այս հայեցակերպերի միջոցով կարելի է ստանալ մշակութային տարրերի առանձնահատկությունների փաստական տվյալներ: Տվյալ դեպքում անցում է կատարվում առածի լեզվական շերտից խոսույթային մակարդակ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ լեզվի իրական պատկերը դրսևորվում է համատեքստային կիրառման շրջանակում:

Վերը թվարկված գիտական տեսությունները թույլ են տալիս եզրակացնել, որ առածներն ու ասացվածքները կարելի է դիտարկել լեզու-մշակույթ-մտածողություն-ճանաչողություն-գործողություն կադապարի շրջանակում՝ ի ցույց դնելով միջգիտակարգային մոտեցում:

Լեզվաբանական ուսումնասիրությունների բնագավառում գործաբանական բաղադրիչի ներմուծումը փոխակերպում է մինչ այդ գիտական շրջանակում առանցքային համարվող լեզվի կառուցվածքային բնույթն ընդգծող դրույթը՝ շեշտելով խոսքի և խոսույթի՝ որպես լեզվի համատեքստային կիրառման հարաշարժ ձևերի դերերը: Կարևորվում է խոսքային փոխակերպումների ու դրսևորումների վերլուծությունը, ընդ որում՝ սոցիալ-մշակութային ազդեցության լույսի ներքո: Նկատի առնելով արտալեզվական բաղադրիչների կարևորությունը՝ խոսույթն անմիջականորեն առնչվում է հասարակական խնդիրներին՝ արտացոլելով հասարակությունն ու մշակույթը: Այլ կերպ ասած՝ լեզվական երևույթների արտալեզվական բնորոշումների վերհանումը կատարվում է լեզվական համայնքի հասարակական ու մշակութային առանձնահատկությունների դիտարկման միջոցով: Ուստի տվյալ պարագայում առածների դիտարկումը որպես խոսույթ լեզվամշակութային ինքնության, ինչպես նաև հասարակական-մշակութային համատեքստի առկայացման ուսումնասիրման եղանակ է: Առածային խոսույթը լեզվական այն շերտերից է, որում տեսանելի է լեզվամշակույթի ճանաչողական-գործաբանական նկարագիրը:

Խոսույթի՝ որպես հասարակական երևույթի վերլուծությունը բացահայտում է ճանաչողական գործընթացների ու հասարակական, մշակութային նորմերի ազդեցությամբ խոսողի՝ տվյալ հաղորդակցական իրադրությանը

¹⁶ St' u **Лучинина, Е. Н.** Лингвокультурология в системе гуманитарного знания. Критика и семиотика. 2004, Вып. 7, էջ 242:

¹⁷ St' u **Мурзин, Л. Н.** О лингвокультурологии, ее содержании и методах. Русская разговорная речь как явление городской культуры. Екатеринбург: Арго, 1996:

համապատասխան լեզվական միջոցների գործածման առանձնահատկությունները: Գործաբանության դիտանկյունից կարևորվում է ոչ թե խոսույթի բաղադրիչների իմաստային դաշտի հաշվառումը, այլ համապատասխանությունը տվյալ իրավիճակին: Խոսույթի վերլուծության բովանդակությունը մեծապես պայմանավորված է հասարակական փոխհարաբերությունների ու փոխազդեցությունների ձևով:

Գիտական շրջանակում համատեքստի ուսումնասիրման հասարակական-ճանաչողական հայեցակերպի հիմքում հասարակական գործոնների ու ճանաչողական տարրերի համախմբի ձևավորած *հասարակական ճանաչողությունն է*¹⁸:

Խնդրո առարկա լեզվական կառույցների՝ առածների ու ասացվածքների ճանաչողական-գործաբանական ուսումնասիրության հիմքը հենց հասարակական ճանաչողությունն է, քանի որ հաղորդակցական համատեքստում գործաբանական կիրառման առանձնահատկությունները և արդյունքում փոխակերպումները պայմանավորված են նախ հանրամշակույթային, այնուհետև սուբյեկտիվ-անհատական բնորոշիչներով: Վերոնշյալ դրույթը հիմք ընդունելով՝ առածի՝ որպես խոսույթի ուսումնասիրությունը իրականացվում է ճանաչողության և գործաբանության հատման դաշտում:

Առածների ու ասացվածքների մշակութային, ճանաչողական ու գործաբանական առանձնահատկությունների դրսևորումները

Հայեցակարգային մակարդակում առածների ուսումնասիրման գործաբանական ու ճանաչողական հայեցակերպերի համադրումն ակնհայտ է, քանի որ գործաբանական առանձնահատկությունների դրսևորման, ինչպես նաև դրանց ուսումնասիրման եղանակը ճանաչողական կադապարների կիրառումն է: Այս շրջանակում առածային խոսույթի վերաբերյալ ուսումնասիրությունները թույլ են տալիս եզրակացնել, որ այն լեզվագործաբանության առանցքի անհատական-հասարակական ու սուբյեկտիվ-օբյեկտիվ հարաբերությունների հատման կետ է: Հիմնվելով օբյեկտիվ հասարակական գործոնների վրա՝ այն առկայանում է սուբյեկտիվ-անհատական մակարդակում: Տվյալ դեպքում առանձնակի կարևորություն է ձեռք բերում ճանաչողական գործընթացների ամբողջությունը, եթե նկատի առնենք, որ օբյեկտիվից սուբյեկտիվ անցումն իրականանում է հենց ճանաչողության միջոցով, ինչն էլ պայմանավորում է գործաբանական մեկնությունը:

Ճանաչողության դերն ակնհայտ է նաև լեզվամշակութաբանության շրջանակում: Հենց այդ պատճառով էլ բազմաթիվ հետազոտություններ են կատարվում *լեզու-ճանաչողություն-մշակույթ* պրիզմայի միջոցով: Նախ՝ «մշակույթը՝ ճանաչողական, իսկ ճանաչողությունը՝ մշակութային գործընթաց է»¹⁹: Լեզուն՝

¹⁸ Sté u Dijk, T. նշվ. աշխ., էջ 15-23:

¹⁹ Hutchins, E. Cognition in the Wild. The MIT Press, 1996, p. 354.

որպես ճանաչողական գործընթացների արդյունք, մշակույթի հետազոտման միջոց է: Հենց այստեղ էլ հատվում են վերոնշյալ կադապարի բաղադրիչների հասկացական շերտերը: Մշակութային լեզվաբանության գիտական հարացույցում կարևոր տեղ է զբաղեցնում «մշակութային ճանաչողությունը»²⁰, որն առկայանում է մշակութային հասկացությունների միջոցով հաղորդակցության համատեքստում: Խոսքը վերաբերում է այն հասկացություններին, որոնք հիմնված են մշակութային իրողությունների վրա: Մշակութային ճանաչողության և լեզվի փոխառնչությունը կարելի է ներկայացնել երկու հակադիր ուղղություններով: Նախ՝ լեզուն մշակութային հասկացությունների ձևավորման և կիրարկման միջավայրն է: Այս ամենին զուգահեռ՝ դրանք արտացոլվում են հենց լեզվում՝ ընդգծելով մշակութային ներիմաստների առկայությունը: Գոյություն ունի լեզվաբանությունը լեզուն դիտարկում է որպես ճանաչողական գործընթացների ամբողջություն, որն անմիջականորեն առնչվում է մշակութային բաղադրիչին. լեզվական ու մշակութային կողմերի հատման կետը հասկացություն է:

Առաձի վերաբերյալ արդի տեսությունները շեշտադրում են լեզվաբանական նոր ուղղությունների՝ գործաբանության և հաղորդակցման տեսության կարևորությունը: Մասնավորապես՝ առաձը բնութագրվում է իլլուկուտիվ իմաստների առկայությամբ²¹, ինչը ենթադրում է, որ համատեքստային գործածության արդյունքում ասույթը կարող է արտահայտել խորհուրդ, հորդոր, զգուշացում և այլն:

Լեզվագործաբանությունը շեշտադրում է լեզվի և գործողության փոխհարաբերությունը, և այս համատեքստում հարկ է նշել խնդրի առնչությամբ Պ. Շաղոդոյի առաջարկած տեսությունը, որը ներառում է երեք դիտանկյուն՝ նկարագրական (représentationnel), գործաբանական (pragmatique) և փոխներգործուն (interactionnel): Նախ և առաջ՝ լեզուն հանդես է գալիս իբրև գործողության լեզվական արտահայտման միջոց: Տվյալ դեպքում լեզուն գործողության նկարագրման ձևն է: Գործաբանական հայեցակերպի համաձայն՝ լեզուն նույնաժամանակ գործողությանը. այն կա՛մ ինքնին ենթադրում է գործողություն, կա՛մ խոսակցին դրդում գործողության: Լեզվաբանը խնդրո առարկա երևույթների այս կապը բնորոշում է լեզու-գործողություն ընդհանրական բանաձևի միջոցով՝ առանց տարանջատելու մեկը մյուսից: Ինչ վերաբերում է փոխներգործուն բնույթին, այն ընդգրկում է հասարակական ուղղվածությունը՝ նկատի առնելով հաղորդակցության կողմերի միջև փոխազդեցության շրջանակը²²: Դիտարկելով առաձների և ասացվածքների քննական վերլուծությունը վերոնշյալ

²⁰ Stéu **Sharifian, F.** Cultural Linguistics. Cultural Conceptualisations and Language. John Benjamins Publishing Company, 2017, էջ 3:

²¹ Stéu **Баранов, А. Н., Добровольский, Д. О.** Аспекты теории фразеологии. М.: Знак, 2008, էջ 69:

²² Stéu **Charaudeau, P.** Comment le langage se noue à l'action dans un modèle socio-communicationnel du discours. De l'action au pouvoir. Cahiers de linguistique française, № 26, Les modèles du discours face au concept d'action, Actes du 9ème colloque de Pragmatique de Genève et colloque Charles Bally, 2004, էջ 152-153:

տեսության դիտանկյունից՝ հարկ է ընդգծել գործաբանական և փոխներգործուն հայեցակերպերի քննության արդիականությունը: Առաձի դեպքում լեզվական կողմն անմիջականորեն առնչվում է գործողությանը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրա կիրառությունը խոսքում ենթադրում է խոսակցի վրա ազդեցության գործառնության կիրարկում: Խոսք-գործողություն համադրման համատեքստում կարևորվում է արտալեզվական գործոնների ազդեցությանը խոսքային մակարդակում լեզվական միավորների (տվյալ դեպքում առաձի և ասացվածքի), ինչպես նաև քերականական կարգերի կիրառման միջոցով խոսքային ակտերի իրագործումը: Հիմնարար դրույթը լեզվի կառուցվածքի և կիրառման փոխհարաբերությունն է հաղորդակցական իրադրությունում: Ընդ որում՝ փոխհարաբերությունն ընթանում է երկու մակարդակում՝ իմաստաստեղծում և իմաստի մեկնաբանում: Հաղորդակցական իրավիճակում առաձի՝ որպես ասույթի միջոցով կառուցվում է խոսքային ակտի իմաստային շրջանակը, որի վերծանումը ենթադրում է լեզվական կադապարից դուրս առկա գործոնների ամբողջության հաշվառում: Իմաստաստեղծման գործընթացում առանցքային դեր է խաղում խոսողի մտադրությունը՝ այն նպատակը, որի շուրջ ձևավորվում է խոսքային ակտի շրջանակը: Վերջինս, տեղեկության հաղորդումից զատ, կատարում է այլ գործառնություններ ևս՝ ներազդում, փաստարկում, համոզում և այլն՝ նկատի առնելով հաղորդակցության շրջանակում փոխազդեցության հանգամանքը: Վերոնշյալ գործառնությունների վերհանումն ու մեկնաբանումը կատարվում են համատեքստային գործոնների օգնությամբ: Կախված առաձային խոսույթի համատեքստից՝ նույն ասույթը կարող է ունենալ տարբեր գործառնություններ, որոնք առկայանում են իլլոկուտիվ մակարդակում և արդյունքում ընդգրկում գործնական կիրառության դաշտեր: Ուստի լեզվականում արտալեզվականի դրսևորումը քննվում է առաձի իմաստի ստեղծման ու վերծանման դիտանկյունից:

Առաձի ուսումնասիրման և ճանաչողության ու գործաբանության կապի հիմքում հասկացության ընկալումն է, փոխաբերական պատկերի արտապատկերումը մարդկային կյանքի տարբեր իրավիճակների վրա, ներակա իմաստի ու հաղորդակցական գործառնությունների վերհանումը: Վերը թվարկված դրույթներն արտահայտում են լեզվական հանրության կոլեկտիվ մտածողության և ճանաչողության առանձնահատկությունները:

Ռուս առաձաբան Գ. Պերմյակովի՝ առաձների դիտարկման վերաբերյալ մոտեցումն առնչվում է գործաբանությանը. հեղինակն առանձնացրել է առաձների գործաբանական յոթ գործառնություն:

1. *կադապարող*, որի նպատակն իրադարձության լեզվական դրսևորումն է,
2. *ուսուցողական*, որը ենթադրում է լեզվամշակույթի, լեզվամտածողության և վարքի կադապարների մասին տեղեկության ուսուցանում,
3. *կանխատեսման*, որը ժամանակային դիտանկյունից առնչվում է ապագային,

4. *մոզական*, որի հիմնական առանցքը ներգործությունն է, խոսքի միջոցով ցանկալի գործողության դրդելը,

5. *հաղորդակցական համատեքստում բացասական երանգավորման*, ինչն ուղղված է ուղիղ պատասխանից խուսափելուն,

6. *Ժամանցային*, որն ապահովում է խոսակցին զվարճություն պատճառելը,

7. *զարդարող*, որը խոսքին հաղորդում է ոճական ու գեղարվեստական ներբերանգ²³:

Առաժաբանության շրջանակում արդի հետազոտություններն ընդգծում են ճանաչողական և գործաբանական հայեցակերպերի կարևորությունը միջմշակութային դիտանկյունից²⁴:

Հարկ է նշել, որ առածի լեզվամշակութաբանական, լեզվաճանաչողական ու լեզվագործաբանական բնութագիրը կարելի է ուսումնասիրել *լեզվի, ասության, խոսության և տեքստի* մակարդակում: Ձևի ու բովանդակության համալիր դաշտի ընդգրկուն բնույթը թույլ է տալիս այն բնորոշել վերոնշյալ չորս լեզվաբանական կարգերի տիրույթում, ընդ որում՝ նաև հատույթների խաչմերուկում:

Խոսքում գործածվելիս առածի բաղադրիչները կարող են ենթարկվել փոփոխությունների՝ ելնելով գործաբանական գործառնությից: Ինչ վերաբերում է ճանաչողական դիտանկյունից առածների ուսումնասիրությանը, վերջինս կարևորվում է նաև թարգմանության տեսության համատեքստում՝ նկատի առնելով համարժեքության հիմնահարցը²⁵:

Վ. Մոկիենկոն նշում է, որ առածի ուսումնասիրման շրջանակը բավականին լայն է՝ «փոխաբերական բառությից մինչև ավարտուն տեքստ»²⁶:

Առածի՝ որպես խոսության ուսումնասիրմանը նվիրված ֆրանսիական դպրոցի կայացման գործում մեծ նշանակություն ունեն լեզվաբան Ժան-Կլոդ Անսկոմբրի աշխատությունները: Ամբողջական իմաստին զուգահեռ՝ առածային խոսության առաջ է բերում ընդգրկուն համատեքստային և հարատեքստային դաշտեր: Ըստ հեղինակի՝ առածը «ինքնուրույն ասության օբյեկտ է», քանի որ ինքնին կազմում է ամբողջական խոսությ՝ առանց հավելյալ ասությունների²⁷: Այնուհետև՝ առածը՝ որպես ինքնուրույն միավոր, հանդես է գալիս տեքստի

²³ Տե՛ս **Пермяков, Г. Л.** К вопросу о структуре паремиологического фонда. Типологические исследования по фольклору. Москва: Наука, 1975, էջ 254-255:

²⁴ Տե՛ս **Belkhir, S.** (ed.) Proverbs within Cognitive Linguistics: State of the Art. John Benjamins Publishing Company, 2024, էջ 11:

²⁵ Տե՛ս **Baghdasarian, H.** Algunas consideraciones sobre la traducción al italiano de las paremias de la novela Rinconete y Cortadillo de Cervantes, *Paremia*, 31, 2021, էջ 150-151:

²⁶ **Мокиенко, В. М.** Аспекты исследования славянской паремиологии / Паремиология в дискурсе. Общие и прикладные вопросы паремиологии. Пословица в дискурсе и в тексте. Пословица и языковая картина мира. Под ред. О. В. Ломакиной. Москва, 2015, с. 9.

²⁷ Տե՛ս **Anscombre, J.-C.** Parole proverbiale et structures métriques. *Langages*, 34^e année, n°139, La parole proverbiale, sous la direction de Jean-Claude Anscombre, 2000, էջ 12:

մակարդակում: Իբրև խոսույթի արդյունք՝ իմաստային տեսանկյունից այն բնութագրվում է տեքստին բնորոշ առանձնահատկություններով:

Այսպիսով՝ խնդրո առարկա հետազոտությունն իրականանում է *առածը որպես բառույթ, առածը որպես ասույթ, առածը որպես տեքստ, առածը որպես խոսույթ* հարացույցների շրջանակում: Ընդ որում՝ հարկ է նշել, որ բառույթն ամփոփված է և՛ ասույթի, և՛ տեքստի, և՛ խոսույթի դաշտում, քանի որ իմաստային տեսանկյունից այն հիմնարար կետն է, որի շուրջ կառուցվում և ուղենշվում է իմաստային շրջանակը:

Որպես ամփոփում՝ առածներն ու ասացվածքներն արդի լեզվաբանական ուղղությունների համատեքստում դիտարկվում են միջգիտակարգայնության լույսի ներքո: Մասնավորապես՝ հետազոտությունների առանցքը առածի և ասացվածքի քննությունն է լեզվամշակութային, լեզվաճանաչողական և լեզվագործաբանական հայեցակերպերի համադրման տիրույթում: Վերոնշյալ հայեցակերպերը համընդհանուր–ընդհանուր–անհատական պրիզմայի միջոցով վերաբանաձևելու արդյունքում պարզ է դառնում, որ առածների ճանաչողությունը համընդհանուր շերտն է, ընդհանուրը՝ մշակութայինը, իսկ գործաբանական բաղադրիչը համապատասխանում է անհատական մակարդակին: Հարկ ենք համարում նշել, որ *առածը դիտարկվում է լեզու, մշակույթ, ճանաչողություն, մտածողություն և խոսույթ կարգերի հատման շրջանակում* հասարակական ճանաչողության դիտանկյունից: Լեզու–մշակույթ փոխառնչության քննության արդյունքում պարզ է դառնում, որ առածները լեզվամշակութային արտահայտություն են, որոնք բովանդակում են հանրույթի լեզվամտածողության առանձնահատկությունները: Իբրև խոսույթ՝ առածի և ասացվածքի ուսումնասիրությունը բացահայտում է մշակութային, ճանաչողական ու գործաբանական առանձնահատկությունների ընդգրկուն համատեքստը, ինչի պարագայում էլ կարևորվում է հաղորդակցական գործառույթի, ինչպես նաև ճանաչողական կաղապարների դերը: Գիտական հարացույցում արդիական են նաև վերոնշյալ կարգերի փոխառնչությունները ընդհանուր–անհատական կաղապարի բնորոշիչ առանձնահատկությունների հաշվառման տեսանկյունից:

НАРЕ ШАЛУНЦ – Лингвокультурный и лингвокогнитивный-прагматический подходы к изучению пословиц и поговорок. – В статье рассматриваются подходы к лингвокультуре, предложенные в академическом контексте, которые включают взаимодействие мышления, когниции и дискурса. Пословицы и поговорки являются уникальными выражениями лингвокультуры, основанными на социальной когниции. Они отражают особенности лингвокультуры и служат средством сохранения лингвокультурной памяти. Подчеркивается важность когнитивных процессов с точки зрения прагматических особенностей пословиц. В этом контексте следует отметить значительную роль коммуникативной функции пословиц в дискурсе, а также проявление общего и индивидуального в пословицах. Учитывая вышеизложенное, изучение пословиц и поговорок на пересечении лингвокультурной и лингвокогнитивной-прагматической перспектив приобретает особую

актуальность в рамках современной лингвистики. Пословицы и поговорки изучаются на перекрестке таких категорий, как язык, культура, когниция и дискурс.

Ключевые слова: *пословица, поговорка, пословичный дискурс, лингвокультура, когнитивный процесс, лингвопрагматика.*

NARE SHALUNTS – The Linguocultural and Linguocognitive-pragmatic Approaches to Studying Proverbs and Sayings. – The article explores academic approaches to linguoculture, focusing on the interrelations among thought, cognition, and discourse. Specifically, proverbs and sayings are unique expressions of linguoculture, grounded in social cognition. They encompass the distinctive features of linguoculture and function as a means of preserving linguocultural memory. From the perspective of the pragmatic properties of proverbs, the importance of cognitive processes is emphasized. In this context, the significant role of the communicative function of proverbs in discourse should be noted, along with the manifestations of the general and the individual. In light of these considerations, the study of proverbs and sayings at the intersection of linguocultural and linguocognitive-pragmatic perspectives is highly relevant within the framework of contemporary linguistics. Proverbs and sayings are thus studied at the crossroads of categories such as language, culture, cognition and discourse.

Key words: *proverb, saying, proverbial discourse, linguoculture, cognitive process, linguopragmatics.*

Գրականութեան ցանկ

- Բաղդասարյան Հ. (2023). Համընդհանուրի, ազգայինի և անհատականի հակադրամիասնությունը որպէս թարգմանական խնդիր, Եր., ԵՊՀ հրատ.: (Baghdasaryan, H. (2023). *Ham@ndyuvani, azgaynaki yev anhadakanin hakadramiasnut'yuny vorpes targmanakan khndir.* Er., YPH hrat).
- Բրուտյան Գ. (1972). Փիլիսոփայություն և լեզու. Եր., «Հայաստան» հրատ.: (Brutyan, G. (1972). *P'ilisosap'yut'yun yev lezu.* Er.: "Hayastan" hrat).
- Баранов, А. Н., Добровольский, Д. О. (2008). *Аспекты теории фразеологии.* М.: Знак. (Baranov, A. N., Dobrovolskiy, D. O. (2008). *Aspekty teorii frazeologii.* M.: Znak).
- Красных, В. В. (2013). Лингвокультура как объект когнитивных исследований. *Вестник Московского университета.* Сер. 9. Филология. № 2, с. 7-18. (Krasnykh, V. V. (2013). *Lingvokultura kak ob'yekt kognitivnykh issledovaniy. Vestnik Moskovskogo universiteta.* Ser. 9. *Filologiya*, № 2, s. 7–18).
- Лучинина, Е. Н. (2004). Лингвокультурология в системе гуманитарного знания. *Критика и семиотика*, Вып. 7, с. 238-243. (Luchinina, E. N. (2004). *Lingvokulturologiya v sisteme gumanitarnogo znaniya. Kritika i semiotika*, Vyp. 7, s. 238–243).
- Мокиенко, В. М. (2015). Аспекты исследования славянской паремиологии / *Паремиология в дискурсе. Общие и прикладные вопросы паремиологии. Пословица в дискурсе и в тексте. Пословица и языковая картина мира.* Под ред. О. В. Ломакиной. Москва, с. 4-25. (Mokienko, V. M. (2015). *Aspekty issledovaniya slavyanskoj paremiologii / Paremiologiya v diskurse...* M.: s. 4–25).
- Мурзин, Л. Н. (1996). О лингвокультурологии, ее содержании и методах. *Русская разговорная речь как явление городской культуры.* Екатеринбург: Арго, с. 7-13. (Murzin, L. N. (1996). *O lingvokulturologii, yeye sodержanii i metodakh // Russkaya razgovornaya rech' kak yavlenie gorodskoy kultury.* Yekaterinburg: Argo, s. 7–13).
- Пермяков, Г. Л. (1975). К вопросу о структуре паремиологического фонда. *Типологические исследования по фольклору.* Москва: Наука, с. 247-274. (Permyakov, G. L. (1975). *K voprosu o strukture paremiologicheskogo fonda // Tipologicheskie issledovaniya po fol'kloru.* M.: Nauka, s. 247–274).

- Тер-Минасова, С. Г. (2000). *Язык и межкультурная коммуникация*. М.: Слово. (Ter-Minasova, S. G. (2000). *Yazyk i mezhkul'turnaya kommunikatsiya*. M.: Slovo).
- Хроленко, А. Т. (2009). *Основы лингвокультурологии: Учебное пособие*. Под ред. В.Д. Бондалетова. 5-е изд. М.: Флинта: Наука. (Khrolenko, A. T. (2009). *Osnovy lingvokulturologii: Uchebnoe posobie*. 5-e izd. M.: Flinta: Nauka).
- Anscombre, J-C. (2000). Parole proverbiale et structures métriques. *Langages*, 34^e année, № 139, La parole proverbiale, sous la direction de Jean-Claude Anscombre, p. 6-26.
- Baghdasarián, H. (2021). Algunas consideraciones sobre la traducción al italiano de las paremias de la novela Rinconete y Cortadillo de Cervantes, *Paremia*, 31, p. 149-161.
- Belkhir, S. (ed.) (2024). Proverbs within Cognitive Linguistics: State of the Art. *John Benjamins Publishing Company*.
- Charaudeau, P. (2001). Langue, discours et identité culturelle. *Revue de didactologie des langues-cultures*, 3-4, № 123, p. 341-348.
- Charaudeau, P. (2004). Comment le langage se noue à l'action dans un modèle socio-communicationnel du discours. De l'action au pouvoir. *Cahiers de linguistique française*, № 26, Les modèles du discours face au concept d'action, Actes du 9ème colloque de Pragmatique de Genève et colloque Charles Bally, p. 151-175.
- Dijk, T. (2008). Discourse and Context. A Sociocognitive Approach. *Cambridge University Press*.
- Kramsch, C. (1998). Language and Culture, *Oxford University Press*.
- Duranti, A. (2003). Language as Culture in U.S. Anthropology: Three Paradigms. *Current Anthropology*. Volume 44. Number 3, p. 323-347.
- Galisson, R. (1988). Cultures et lexicultures. Pour une approche dictionnaire de la culture partagée. *Annexes des Cahiers de linguistique hispanique médiévale*, vol. 7, Hommage à Bernard Pottier, p. 325-341.
- Humboldt, W. (2000 [1828]). Sur le caractère national des langues et autres écrits sur le langage. *Trad. fr. éd. Bilingue. Paris : Seuil*.
- Hutchins, E. (1996). Cognition in the Wild. *The MIT Press*.
- Lotman, I, Ouspenski B. (1990). Сémіотікa дe лa културe рyсскoгo. *Traduit du Russe et Annoté par Françoise Lhoest. Lausanne: L'Âge d'Homme*.
- Loubier, C. (2008). Langues au pouvoir. Politique et symbolique. *Préface de William Francis Mackey. Paris : L'Harmattan*.
- Sharifian, F. (2017). Cultural Linguistics. Cultural Conceptualisations and Language. *John Benjamins Publishing Company*.
- Sinha, C. (2017). Ten Lectures on Language, Culture and Mind. Cultural, developmental and evolutionary perspectives in cognitive linguistics. *Distinguished Lectures in Cognitive Linguistics*, Vol. 6, Brill.